

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<p>Ա. Ա. Հ. Ծննդյան ամսաթիվ Գիտական աստիճան Գիտական կոչում</p>	<p>Սահակյան Ռուստամ Ռաֆիկի 1 օգոստոսի 1965թ. տեխնիկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, Ա.Մ. Պրոխորովի անվան ՌԴ ինժեներական ակադեմիայի ակադեմիկոս</p>
<p>Կրթություն Կուսակցականություն Պարգևներ</p>	<p>1) Բարձրագույն տեխնիկական, 2) բարձրագույն տնտեսագիտական անկուսակցական 1) Ա.Մ. Պրոխորովի անվան ՌԴ ինժեներական ակադեմիայի մեդալ՝ «Ինժեներական գիտությունների զարգացման գործում ներդրման համար», 2015թ. 2) Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի Պետրոս Մեծի անվան Արծաթե Պատվո նշան «Սոցիալական կրթության մեջ նվաճումների համար», 2015թ. 3) Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի անվան Արծաթե մեդալ «Սոցիալական ծառայության համար», 2010թ.</p>

Աշխատանքային փորձ

Երբ	Որտեղ	Պաշտոնը
2020 – ից	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	Ռեկտոր
2019 -2020	Մարքեթինգի և սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիա (Академия ИМСИТ), ք. Կրասնոդար / Մաթեմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն	Ամբիոնի վարիչ
2013-2020	Մարքեթինգի և սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիա (Академия ИМСИТ), ք. Կրասնոդար / Մաթեմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն	Պրոֆեսոր
2019 -2020	«Միջազգային բիզնես դպրոց» ՍՊԸ, ք. Կրասնոդար	Զարգացման գծով տնօրեն
2007-2019	«Միջազգային բիզնես դպրոց» ՍՊԸ, ք. Կրասնոդար	Հիմնադիր տնօրեն
2006 -2013	Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի Անապայի մասնաճյուղ / Տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության և իրավունքի ֆակուլտետ, ք. Անապա	Դեկան
2006-2016	Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի Անապայի մասնաճյուղ / Տեխնոսֆերայի անվտանգության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի ամբիոն, ք. Անապա	Պրոֆեսոր
2008-2009	Ժամանակակից տեխնոլոգիաների և տնտեսագիտության ինստիտուտ (ИСТЭК),ք. Կրասնոդար / Բիզնեսի կրթական ծրագրերի վարչություն	Պետ

Երբ	Որտեղ	Պաշտոնը
2008-2013	ՌԴ Ժամանակակից տեխնոլոգիաների և տնտեսագիտության ինստիտուտ (ИКТЭК), ք. Կրասնոդար / Համակարգչային տեխնոլոգիաների և հաշվողական տեխնիկայի ամբիոն	Պրոֆեսոր
1999-2006	ՌԴ Ամուրի պետական համալսարան / Մենեջմենթի զարգացման և կառավարման կադրերի պատրաստման ինստիտուտ – Բիզնես դպրոց, ք. Բլագովեշչենսկ	Տնօրեն
1999-2006	ՌԴ Ամուրի պետական համալսարան / Մաթեմատիկական անալիզի և մոդելավորման ամբիոն	Պրոֆեսոր
2002-2006	ՌԴ Ամուրի պետական համալսարան / Գիտահետազոտական աշխատանքների և ինովացիաների վարչություն	Պետ
2004-2006	ՌԴ Ամուրի մարզի Բլագովեշչենսկ քաղաքի տնտեսական և սոցիալական աջակցության հիմնադրամ	Կառավարման խորհրդի նախագահ
2005-2006	Ռուս-Բրիտանական նախագիծ. «Բրիտանական կրթությունը Ռուսաստանում (BRIDGE)» / Մեծ Բրիտանիայի Լիդս Մետրոպոլիտեն համալսարանի և Ամուրի պետական համալսարանի միջև	Ղեկավար
2004-2005	Ռուս-Ամերիկյան նախագիծ. «Միկրոֆինանսավորման մոդելի փոխանցման նախագիծ» / ԱՄՆ «Քաունթերփարթ Բիզնես հիմնադրամ» Փոքր ձեռնարկատիրության աջակցության հիմնադրամի» և Ամուրի պետական համալսարանի միջև	Ղեկավար
2003-2004	Ռուս-Ամերիկյան նախագիծ. «ՌԴ Ամուրի մարզի փոքր բիզնեսի աջակցություն» / ԱՄՆ Միսիսսիպի նահանգի միջազգային զարգացման Կոնսորցիումի և Ամուրի պետական համալսարանի միջև	Ղեկավար
1999-2002	Ռուս-Ամերիկյան նախագիծ. «Միսիսսիպի նահանգի միջազգային զարգացման Կոնսորցիումի/Ջեքսոն քաղաքի պետական համալսարանի և Ամուրի պետական համալսարանի գործընկերություն» (NIS College and University Partnership Program, Grant No. IA-ASJL-G8190272)	Համակարգող
1996-1999	«Կոմյուտեր Սերվիս» ՍՊԸ / «Բիզնես Դպրոց», ք. Վանաձոր, ՀՀ	Հիմնադիր տնօրեն
1996-1999	ՀՊՀՀ Վանաձորի մասնաճյուղ / Էլեկտրոնիկայի ամբիոն	Ավագ դասախոս
1992-1996	«ՊետրոՌուս» մասնավոր ձեռնարկություն, Ս. Պետերբուրգ, ՌԴ	Հիմնադիր տնօրեն
1992-1995	Ս. Պետերբուրգի Տեխնոլոգիայի և Դիզայնի պետական համալսարան, Ս. Պետերբուրգ, ՌԴ	Ասիստենտ
1989-1992	ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղ (այժմ` ՀՊՀՀ Վանաձորի մասնաճյուղ), ք. Վանաձոր, ՀՀ	Ասիստենտ

Կրթություն.

- 2018 Մարքեթինգի և սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիա, ք. Կրասնոդար, «Մասնագիտական կրթության մանկավարժ», պրոֆեսիոնալ վերապատրաստում
- 2011-12 Ռուսաստանի պետական սոցիալական համալսարան, «Սոցիալական ոլորտի մենեջեր», պրոֆեսիոնալ վերապատրաստում
- 2005-06 Ամուրի պետական համալսարան, «Պետական և համայնքային կառավարում», մասնագիտական վերապատրաստում

- 2000-04 Ամուրի պետական համալսարան, «Ֆինանսներ և վարկեր» մասնագիտություն, որակավորումը՝ տնտեսագետ, բարձրագույն կրթություն
- 2002 Դոկտորական թեզի պաշտպանություն 05.13.01 մասնագիտությամբ /«Համակարգային անալիզ, ինֆորմացիայի կառավարում և մշակում»/ (կիրառական մաթեմատիկա և կառավարման գործընթացներ), Ս. Պետերնուրգի պետական համալսարան. Թեզի թեման. «Դժվար ձևակերպվող անընդհատ տեխնոլոգիական խնդիրների համակարգային անալիզ»:
- 1999-02 Ամուրի պետական համալսարանի դոկտորանտուրա
- 1994 Տեխնիկական գիտությունների թեկնածուական թեզի պաշտպանություն 05.13.01 մասնագիտությամբ /«Հաշվողական տեխնիկայի, մաթեմատիկական մոդելավորման և մաթեմատիկական մեթոդների կիրառությունը գիտական հետազոտությունների մեջ» (գիտության ոլորտներում), Ս. Պետերբուրգի տեխնոլոգիայի և դիզայնի պետական համալսարան
- 1990-94 Սանկտ-Պետերբուրգի տեխնոլոգիայի և դիզայնի պետական համալսարանի ասպիրանտուրա
- 1982-89 ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղ (այժմ՝ ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ), «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» մասնագիտություն, որակավորումը՝ ինժեներ-էլեկտրիկ, բարձրագույն կրթություն. գերազանցությամբ
- 1982 Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) թիվ 8 միջնակարգ դպրոց, գերազանցությամբ

Վերապատրաստումներ.

- 2018 Որակավորման բարձրացում «Էլեկտրոնային միջավայրի կազմակերպում ուսումնական հաստատությունում» ծրագրով, **Կրասնոդար, ՌԴ**
- 2016 Որակավորման բարձրացում «Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը հաշմանդամների կրթական ծրագրերում» ծրագրով, **Անապա, ՌԴ**
- 2013 Որակավորման բարձրացում «Ակտիվ և ինովացիոն մեթոդները կրթության ոլորտում» ծրագրով, **Յարոսլավլ, ՌԴ**
- 2013 Որակավորման բարձրացում «Ժամանակակից հոգեբանական-մանկավարժական տեխնոլոգիաները ուսանողության միջավայրում էքստրեմիզմի և ահաբեկչության դեմ պայքարի պրոֆիլակտիկայի համար» ծրագրով, **Մոսկվա, ՌԴ**
- 2011 Որակավորման բարձրացում «Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ և երկաստիճան կրթության որակի բարձրացման մեխանիզմներ» ծրագրով, **Մոսկվա, ՌԴ**
- 2010 Որակավորման բարձրացում «Որակի մենեջմենթի համակարգեր» ծրագրով, **Յարոսլավլ, ՌԴ**
- 2010 Որակավորման բարձրացում «Ներքին աուդիտ» ծրագրով, **Յարոսլավլ, ՌԴ**
- 2009 Որակավորման բարձրացում «Բարձրագույն դպրոցի գործունեության կատարելագործման ինովացիոն մեթոդներ» ծրագրով, **Վոլգոգրադ, ՌԴ**
- 2005-06 «Թրեյներների և բիզնես խորհրդատուների պատրաստում» ծրագրով ուսուցում /«Արտաքին առևտրի և ներդրումների աջակցության «ՊՐՈԳՆՈԶ» կենտրոնի» (ՌԴ, Բլագովեշչենսկ) և ԱՄՆ-ի Ալյասկայի Համալսարանի (Անկորիջ, **ԱՄՆ**) համատեղ կազմակերպված
- 2006 «Միջազգային բիզնեսի կառավարում» ծրագրով վերապատրաստում, **Մեծ Բրիտանիա**
- 2005 «Վարկային մասնագետ» ծրագրով վերապատրաստում /«Քաունթերփարթ Բիզնես հիմնադրամ», **Խաբարովսկ, ՌԴ**

- 2004 «Գործարար ադմինիստրացիայի մագիստր /MBA/» ծրագրով վերապատրաստում, **Մեծ Բրիտանիա**
- 2004 «Էֆեկտիվ մենեջմենթ» ծրագրով ուսուցում, Բլագովեշչենսկի Բիզնես Ինկուբատորի և «Վինրոք Ինթերնեյշնլ» (**ԱՄՆ**) համատեղ կազմակերպված
- 2003 «Փոքր բիզնեսի զարգացում և աջակցություն» ծրագրով վերապատրաստում, **ԱՄՆ**
- 2001 «Գործարար ադմինիստրացիայի մագիստր /MBA/» ծրագրով վերապատրաստում, **ԱՄՆ**
- 2000 «Կառավարման գործունեության վերահսկողություն» ծրագրով վերապատրաստում, **Ճապոնիա**

Գիտություն.

Գիտական դպրոց. «Բարդ տեղեկատվական և տեխնիկական համակարգերի համակարգային վերլուծություն և կառավարում. Դժվար ձևակերպվող ճանաչման, կանխատեսումների և դասակարգման խնդիրների լուծման մոդելների և ալգորիթմների մշակում»

Գիտական դպրոցի շրջանակներում հետազոտությունների ուղղվածությունը

- 1) Համակարգային վերլուծության փուլերի ավտոմատացումը ոչ ֆորմալ մեթոդների հիման վրա
- 2) Որոշումների ընդունմանը նպաստող տեղեկատվական համակարգի մշակում գիտելիքների դինամիկ, ոչ հստակ բազայի հիման վրա
- 3) Բազմաչափ տվյալների դինամիկ ակնադիտությունը և ավտոմատ դասակարգումը կառավարման համակարգերում թվային տեղեկատվության փոխակերպման խնդիրների լուծման համար
- 4) Բարդ տնտեսական համակարգերի ուսումնասիրության համար տվյալների վերլուծության և կառավարման տեղեկատվական համակարգի մշակում

Գիտական հետաքրքրություններ.

Համակարգային վերլուծություն, արհեստական բանականություն, արհեստական նեյրոնային ցանցեր, ոչ հստակ տրամաբանություն, պատկերների ճանաչման մաթեմատիկական մեթոդներ, թվային մեթոդներ

Կիրառական նախագծեր.

«Մթաթթափ» նախագծերի հիմնադիր և ղեկավար

- 1) Մննդի պատվերների և առաքման միասնական համակարգ «EATonline»/
<http://eatonline.ru/>
- 2) Սրճարանների և ռեստորանների սննդի առաքիչների ծառայություն
«KENGURU»/ <https://ks-kenguru.ru>

Դասավանդվող առարկաներ.

- Համակարգային վերլուծություն
- Արհեստական բանականության համակարգեր
- Մեծ տվյալների ինտելեկտուալ վերլուծություն և մեքենայական ուսուցում
- Նեյրոցանցեր և նեյրոհամակարգիչներ
- Ոչ հստակ բազմությունների և տրամաբանության տեսություն
- Պատկերների ճանաչման տեսություն
- Ավտոմատ կառավարման տեսական հիմունքներ
- Ավտոմատացման համակարգերի մոդելավորում
- Սովորական դիֆերենցիալ հավասարումների լուծման թվային մեթոդներ
- Փորձերի պլանավորում և փորձնական տվյալների մշակում
- Էկոնոմետրիկա

- Ճյուղի տնտեսագիտություն
- Ձեռնարկությունների կազմակերպում, պլանավորում և կառավարում

Անցկացրած թրեյնինգներ և բաց դասախոսություններ.

- Together4Armenia (www.together4armenia.am) ծրագրի շրջանակներում դասընթացների անցկացում Հայաստանի մարզերում (Արհեստական բանականության համակարգեր; Ներդրանքներ և ներդրող համակարգիչներ);

- թրեյնինգների անցկացում Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզերում («Էֆեկտիվ վաճառք», «Առարկությունների և դիմադրությունների հետ աշխատանք», «Կոնֆլիկտների կառավարում», «Անձնակազմի էֆեկտիվ ղեկավարում», «Էֆեկտիվ բանակցություններ»)

Պրոֆեսիոնալ հետաքրքրություններ.

Բիզնես կրթություն, փոքր բիզնեսի խորհրդատվություն, բիզնես կառավարում, հակա-ճգնաժամային կառավարում

Լեզուների իմացություն.

հայերեն /մայրենի/, ռուսերեն, անգլերեն

Հրապարակումներ.

146 հրապարակում, այդ թվում՝ 1 մենագրություն, 10 գիտա-մեթոդական աշխատանք, 17 ԷՀՄ-երի համար պաշտոնական գրանցման վկայական (ՌԴ Պատենտների գրանցման գործակալություն):